



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3483

24547

24548

24549

24550

891.71

4.83

20 03

6108

94. 0

Այս գիրքը պատկանում է
Գրադ. Եղանակին

Մ. ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Ժ.Գ.

թիվ 130

325

ՄԻ ԳԱՂԹԵՔ

Գրեց

ՄԿՐՏԻՉ ՓՈՐՓՈՒԳԱԼԵԱՆ



ՄԱՐՍԷՅԼ

Հայերէն Տպարան Մ. Փորթուգալեանի

Imprimerie du Midi, 19, rue Grande-Armée, Marseille.

1913

Հայերին դէպի Ամերիկա գաղթի անհաշիւ ու չափազանց հոսանքը Հայաստանի բնակիչների հեռոցհեռ աւելի նուազման և երկրին ամայացման պատճառներէ մին կը դառնայ: Այս ցաւալի կացութիւն բոլոր հայրենասէրների ուշադրութիւնը դրաւած լինելով մանաւանդ այս միջոցին, օգտակար համարեցի առանձին գրքոյկով մ'ալ հրատարակել և տարածել ինչ որ ասկէ 3 1/2 տարիի շափ առաջ գրած էի Առմենիաի Ի Ե տարեշրջանի 5, 6 և 7 թիւերին մէջ ՄԻՊ. Ա. Ղ. Թ. Է. Ք. վերնագրին տակ:

Ամերիկա գաղթողներին 100էն հազու 10ին յաջողութիւնը պէտք չէ շացունէ Հայաստանցիների աչքերը որ շտեսնեն մնացած 90ի թշուառութիւնը: Մենք տարակոյս չունինք որ այդ 90ի մէջ շատեր կան որոնք եթէ երկրին մէջ մնային և այնտեղ յանձն առնէին ենթարկուիլ այն դրամական ծախքերին, նեղութիւններին ու չարաչար աշխատանքներին որ յանձն կառնեն Ամերիկա երթալու ճանապարհին վրայ և Ամերիկաի մէջ, պիտի կրնային համեմատապէս աւելի լաւ դիրք մը ունենալ իրենց երկրի մէջ և աւելի առողջ ու հեշտին կեանք մը վարել:

50355-ահ

36793-66 V

Ա.

Օսմանեան Սահմանադրութեան վե-
րահրատարակումէն յետոյ, խօսուա-
ծին և յուսացուածին համեմատ չը-
բազմացաւ հայրենիք վերադարձող
գաղթականների թիւը: Ընդհակա-
ռակ, երթևեկութեան ազատութիւնը
պատճառ դարձաւ աւելի մեծ թուով
գաղթելու: 10 վերադարձողին դէմ՝
90 հոգի հայրենիքէն կուգայ դէպի
Ամերիկա: Մարսէլլի հայկական պան-
դոկները հետզհետէ կը շատնան ուր
Թիւրքիաէն կուգան կը խճողուին
միշտ հարիւրաւոր Հայ, Թիւրք, Սի-
րիացի գաղթականներ, Ամերիկա
չուելու համար: Ասոնցմէ շատեր սըր-
տայոյց խեղճ վիճակի մը կենթար-
կուին այստեղ, ճանապարհորդութեան

համար պէտք եղած կարգադրու-
թիւններն ու նախապատրաստու-
թիւնները կատարած չլինելով: Լեզու
չգիտեն, գրամ չունին, մէկ երկու
անձեր միայն կը ճանչնն Ամերիկաի
մէջ որոնցմէ իրենց գրամական օգ-
նութիւն հասնելը տարակուսելի է և
այդ վիճակի մէջ կը ստիպուին ամիս-
ներով մնալ Մարտէլլ և սպասել: Հայ
սմարները, որոնց միայն գէշ կողմե-
րը խօսուած են յաճախ, կը պահեն
այդ գաղթականներն՝ անօթի չմեռ-
նելու չափ դրամ բաժնելով անոնց,
որ երբեմն առատօրէն կը գանձեն
յետոյ և երբեմն ալ բողբոլին կը
կորսնցունեն:

Մարտէլլի նեղութիւնները գաղ-
թականներին համար « սկիզբն են եր-
կանց »: Ասոնց կը յաջորդեն ճանա-
պարհորդական նեղութիւնները և
երազի մէջ իբրև երկրային գրախա-

երեցած Ամերիկաի տառապանքնե-
րը:

Ի՞նչ է պատճառն որ խումբ խումբ
կուգան այսպէս հայրենիքէն գէպի
Ամերիկա գաղթելու համար:

Մեր խօսքը չվերաբերիր անշուշտ
այն սակաւաթիւ անձերին որոնք ար-
հեստ կամ գիտութիւն սովորելու նը-
պատակով կերթան Ամերիկա և կու-
ղեն վերադառնալով օգտակար լինել
իրենց հայրենիքի: Ատոր համար ալ
նախապէս կը պատրաստուին որչափ
կարելի է: Այդ չէ գաղթականութիւ-
նը:

Ոմանք ալ ապրուստի կուուին հա-
մար հզօրապէս պատրաստուած զգա-
լով զիրենք և իրենց գործունէութեան
համար ասպարէզը նեղ գանելով
թիւրքիարի մէջ, կերթան Ամերիկաի
վաճառականական և արհեստագիտա-
կան շահագործումներէն օգտուելու:

Բայց մեծամասնութիւնն իր տուն տեղ թողլով՝ գաղթելու հասանքէն միայն քչուած կուգայ, առանց որոշ ծրագրի և նախապատրաստութեան. ատոնք Բանիւրթի ոչխարներին պէս իրար կը հեռեին ծովն ինկնելու համար, առանց գիտնալու թէ ո՞ւր կերթան: Ստոնց համար միշտ հեռաւոր քուրբն է որ զօրաւոր կը լինի, մինչդեռ եթէ իրենց հայրենիքի մէջ մը նացած լինէին, շատ մը յուսախաբութիւններէ և ատոնց հեռեանքն եղող թշուառութիւններէ զերծ պիտի մնային, հայրենի տան մէջ վայելելով ընտանեկան քաղցրութիւնները: Եթէ Սմերիկաի չափ չէին կրնար վաստկիլ այնտեղ, գոնէ Սմերիկաի չափ ալ ծախսելու չէին ստիպուեր, ինչ որ աւելի կը ծանրացունէ Սմերիկաի մէջ անգործ անցուցած օրերի տառաջոտները:

Եւ ինչո՞ւ համար կը շահի մարդ: Չէ՞ որ իր առողջութիւն, իր կեանք պահպանելու համար: Մարմնի սընունդներ և մտքի հաճոյքներ չեն ձգտիր այդ նպատակի: Գրամը նպատակ մը չէ, այլ միջոց մ'է անձնական առողջութիւնը պահպանելու: Արդ, մեր թիւրքիացի գաղթականներէն շատեր որոնք կը տեսնենք թէ հուժկու և քաջառողջ վիճակի մէջ ասկէ անցնելով կերթան Սմերիկա, իրենց վերադարձի ժամանակ դեղնած, տրկարացած և երբեմն ալ դժուարաբոյժ հիւանդութիւնների ենթարկուած կուգան: Սյրպիսիներէն ոմանք թէև փոքրիշատէ դրամ ալ չահած են, բայց իրենց առողջութիւն, իրենց անձնապահպանութիւն՝ որ նպատակն է շահելուն, կորսնցուցած են. նպատակը վրայ տուած են, նպատակին հասնելու միջոցը՝ դրամը՝ ձեռք անցունելու համար:

կընդունինք թէ Թիւրքիաի քա-
ղաքական և անտեսական յոռի կա-
ցութիւնը մեծ բաժին ունի այս դադ-
թականութեան պատճառներին մէջ :
Քայց Թիւրքիան, կամայ թէ ակա-
մայ, պիտի բարեփոխուի անպատ-
ճառ. ներկայ վիճակին մէջ չմնար,
չկրնա՛ր մնալ այս վիճակի մէջ :

Իրաւ է թէ քիչ մ'աւելի ժամանա-
կի կը կարօտի այդ, բայց ասոր հա-
մար չարժեք տուն տեղ քանդել, սե-
փական հողերը ծախելով կամ երեսի
վրայ թողլով դադթել հեռաւոր աշ-
խարհներ, հարիւրաւորների մէջէն մի
քանիների ունեցած յաշոգութենէն
չլացած նետուելու հասար անձանօթին
մէջ, անորոշ կամ անգործնական ծը-
րադրով : Բնդհակառակ, պէտք է հող
առնել Թիւրքիաի մէջ և ոչ թէ ու-
նեցածը ձգել կամ ծախել : Այդ հո-
ղեր ապագային մէջ տասնապատիկ և

աւելի արժէք պիտի ստանան : Երբ
1876ին խարբերդէն անցնելով Տիգ-
րանակերտի և Քաշէչի վրայով կեր-
թայի վան առաջին անգամը լինելով,
խարբերդի արգաւանդ դաշաավայրը
դիտած ատեն՝ ձիապանները պար-
ժանքով կը կրկնէին ինձ ժողովրդին
մէջ տարածուած այս առածը թէ
Խարբուք օվաւը՝ ալքը՝ և Եւզաւք
(Դաշար խարբերդի՝ բոյն է ոսկիի) :
Թէև առայժմ փշով ու տատակով
նոյն իսկ ծածկուած լինի այդ ոսկիի
բոյնը, որը՝ կը թողուք զայն բողբո-
վին և կեղնէք բաղդ որոնելու հա-
մար օտար աշխարհներ դադթել ահա-
գին բազմութեամբ, ո՛վ խարբերդ-
ցիներ մասնաւորապէս, և Թիւրքա-
հայաստանցիներ ընդհանրապէս :

Գիտեցէ՛ք ձեր չորս կողմը և բա-
ցորոշ պիտի տեսնէք Թիւրքիաի մէջ
կատարուող բարեշրջումը, թէև կա-

մաց կամաց և ոչ մէկ անդամէն: Մէկ տարի առաջուան թիւրքիա՞ն է այժմ, թէև հայրենասէր թիւրքիացիների ցանկացած վիճակն ստացած չլինի տակաւին: Շատ աւելի հեռի ժամանակները ներկային հետ բազդատելով՝ աւելի զգալի կը դառնայ թիւրքիաի մէջ կատարուող բարեշրջումը: Յիշեցէ՛ք Ենիէրիների ժամանակներն ալ ուր ընտանիքի հայր եղող քրիստոնեայ մը, նոյն իսկ Կ. Պօլսի մէջ, ապահով չէր թէ գեիշերը ողջ առողջ պիտի կրնար տուն վերագառնալ և գրկել իր զաւակները: Վանի մէջ ինձ կը պատմէին թէ դեռ ասկէ 40-50 տարի առաջ հայերն իրաւունք չունէին Այգեստանէն քաղաք երթալու ձիով. պէտք էր որ էշի վրայ նստած երթային: Ի՛նչ տարբերութիւն մինչև այժմ. կառքով ալ կրնան երթևեկել հիմա:

Եթէ ուզէք քիչ մ'աւելի հեռու ժամանակներն ալ երթալ հայաստանի ժողովրդի վիճակն իմանալու և ներկայիս հետ բազդատելով բարեշրջումը տեսնելու համար, թղթատեցէ՛ք նաև Առաքել պատմագիրը և պիտի տեսնէք որ այդ գրքի ամէն մէկ երեսէն արտասուքի և արիւնի կաթիլներ կը թափթփին: Այլ սակայն հայն ու հայութիւնը մեծ մասամբ մնաց իր նուիրական հողի վրայ և այն սոսկալի տառապանքների մէջէն շարունակելով հասաւ մինչև մեր օրեր: Մի-թէ՛ համեմատապէս աւելի բարեբազդ ներկայ վիճակի մէջ՝ անկարող ներկայանալով՝ հայրենիքը թափուր և բողբոլին ամայի թողելու դործը պիտի պատկանի հիմակուաններին որ հիներէն աւելի հայրենասէր և խեղալական լինելու յաւակնութիւնն ունին...:

Մենք մինչև այստեղ նայեցանք
 գաղթականական հոսանքի հետևանք-
 ներին վրայ անհատական տեսակէ-
 տով: Սոյն յօդուածի Բ. մասով կը
 խօսինք թէ ի՞նչ հետևանքներ կու-
 նենայ գաղթականութիւնը հայ ազ-
 գայնութեան տեսակէտով:

Բ.

Հայերին օտար երկիրներ գաղթե-
 ըր վտանգաւոր է անհատական տեսա-
 կէտէն աւելի ազգային տեսակէտով:

Այն ազգ որ իր ոտքի տակ իրեն
 սեփական հող չունի, չկրնար կան-
 գուն մնալ երկար ատեն:

Հայը Հայաստանով է որ կրնայ ազ-
 ըրի իբրև հայ ազգ: Հայաստանէն
 դուրս ամէն տեղ ալ, ուշ կամ կա-
 նուխ, Հայութիւնը կորսուելու վը-
 տանդին ենթակայ է: Կորուստն աւե-

լի արագընթաց կը դառնայ երբ գա-
 ղութին յարաբերութիւնները մայր-
 հայրենիքին հետ աւելի շուտ խզուին:

Միայն Հայերին չէ որ այդպէս կը
 պատահի, այլ ամէն ազգի որ էր
 մայր-հայրենիքէ կը հեռանայ և կեր-
 թայ Եւրոպա կամ Ամերիկա օտարու-
 թեան մէջ հաստատուի: Այս տեղեր
 գաղթողը մինչև Յրդ սերունդը կըը-
 նայ, շատ կամ քիչ, պահպանել էր
 նախկին ազգայնութիւնը. բայց Յրդ
 սերունդէն անդին շատ դժար է այդ,
 որովհետև ազգութիւն (nationalité) բա-
 ռըն Եւրոպայի և Ամերիկայի մէջ ուրիշ
 նշանակութիւն ունի, Ասիական եր-
 կիրներին մէջ ուրիշ, ինչպէս որ մի
 քանի անգամ Արմէնիայի մէջ մանրա-
 մասնօրէն բացատրած ենք այդ:

Ամերիկայի մէջ կամ եւրոպական
 ունէ երկրի մէջ ծնած մէկը նոյն
 երկրի ազգութեան անգամ կը հա-

մարուի և տեղացիին հետ հաւատա-
բապէս կը վայելէ ամէն իրաւունք-
ներ, իր հայր կամ մայր ո՛ր երկրէ
ալ գաղթած լինի այնտեղ: Օրինակի
համար, Ֆրանսաի մէջ չեն հարցնէր
քեզի թէ ի՞նչ կրօնք ունիս, ո՞ր եկե-
ղեցին կերթաս, ի՞նչ ցեղէ յառաջ
եկած ես և ի՞նչ լեզուով կը խօսէր
քու հայրդ. Ֆրանսա ծնած ես, այդ
բաւական է որ Ֆրանսացի (այսինքն
Ֆրանսական ազգին անդամ) համար-
ւիս և ամէն իրաւունք վայելես իբրև
Ֆրանսացի, ինչպէս և հարկադրուած
ես կատարել Ֆրանսացիի մը բոլոր
պարտականութիւնները (1):

(1) Այս խնդրի մասին տեսնել Արմե-
նիաի ԻԲ տարեշրջանի 1, 2, 3 և 4 թիւե-
րին մէջ «Հայ ազգը և եկեղեցին» վեր-
նագրով, ԺԳ տարեշրջանի 36 թուին մէջ
«Ազգութեան պահպանները» վերնագրով
և ալ մեր գրածները:

Մնօնք որ տեղեակ են եւրոպական
և ամերիկեան քաղաքականութեան,
ինչպէս և անօնք որ փոքրիշատէ տե-
ղեակ են հայ գաղթականութիւնների
պատմութեան, կրնան շատ լաւ ըմ-
բռնել մեր գրածները:

Հայոց պատմութենէն գիտենք ար-
դէն որ հայեր մի քանի անգամ գաղ-
թած են եւրոպա ուր հարիւր հա-
զարներով թիւեր կազմած են. ո՞ւր
են այժմ այդ հայեր, ի՞նչ եղան: Զի-
րենք հիւրընկալող ազգերին մէջ
խառնուեցան ձուլուեցան, մի քանի
տեղեր բռնի (ինչպէս վլահիա, Բու-
լղանիա) և ուրիշ տեղեր ալ կամաւ
կամ անզգալի կերպով, քաղաքական
բերմունքների ազգեցութեան տակ:

Ահա թէ ի՞նչ կը գրէ այդ նկատ-
մամբ Մ. Նալբանդեանց.

«Մնի քաղաքի կործանուելուց յե-
տոյ հայերը Լեհաստան գաղթեցին

ահագին բազմութեամբ. եթէ նոցա
նից մի մասը փրկվեցաւ և այսօր
հայութեան անունը կրում է իւր ճա-
կատի վերայ, շնորհակալութիւն Ղրի-
մի թաթարներին: Իսկ միւս և աւել-
լի մեծ մասը, որ մնաց լեհաստանում,
ս'ւր է, իւրեան եպիսկոպոսներով և
քահանաներով: Լեհաստանի մէջ մեր
ճանապարհորդութեան միջոցին
(1859) շատ անգամ պատահեցաւ մեզ
տեսանել հոյակապ, բայց այժմ ամա-
յի, հայկական եկեղեցիք, իսկ Հայ
և ո՛չ մի հատ. ի՛նչ եղան, ս'ւր գնա-
ցին:

« Եթէ Հայոց ազգը իւր կրօնը
պահելով մնաց աշխարհի երեսին,
այդ մասին շնորհակալութիւն Մահ-
մետականութեան. սա բացատարար
պահպանեց Հայերի կրօնը: Ազգը որ-
չայի ևս թաղված լինէր խաւար տը-
գիտութեան մէջ, այնու ամենայնիւ,

եթէ մի մասը դիտակցութեամբ,
միւս և աւելի մեծ մասը ֆանատիկո-
սութեամբ հեռի մնալով Մահմետա-
կանութիւնից, պահեց իւր կրօնը,
հետևաբար և ազգութիւնը:

« Թո՛ղ Հայոց ազգը, իր թաղաւո-
րութեան կործանման օրից, ստրկա-
նար որևէ Գրիստանեայ կառավարու-
թեան, այն ժամանակ կը տեսնէինք
... բայց ի՛նչպէս պիտի տեսնէինք.
վասն զի մենք ևս ծնելու չէինք որ-
պէս Հայ: » (Մի.բայելի Նալբանդեանց
Երկու տող: Տպագր. Արամեան, փա-
րիզ. 1861. Երես 27-28:

Կարդացէ՛ք Գովրիկեան Հ. Գրիգոր
վարդապետի (այժմ վիէննայի Մխի-
թարեաններին Աբբահայր) գրած
« Հայք յեղիսարեթուպօլիս Գրանսել-
ուանիոյ » երկհատոր յոյժ հետաքրք-
րական գիրքը և պիտի տեսնէք որ
ասկէ տակաւին մէկ երկու դար առաջ

բաւական մեծ թուով հայ գաղութ
մ'ունէինք Աւստրէհունգարիա ուր
իրենց բնակութեան յատուկ քաղաք-
ներ, իրենց համար մասնաւոր դատա-
բաններ ունէին և իրենց տրուած
առանձնաշնորհումներով տեղական
ինքնավարութիւն մը կը վայելէին։
Ի՞նչ եղած է այժմ այդ ստուարա-
թիւ ու հարուստ հայ գաղութը...:

Ասկէ 360 տարիի չափ առաջ հո-
լանտաի մայրաքաղաքին Ամսդէրտա-
մի մէջ հայ գաղութ մը կար որ փա-
ռաւոր եկեղեցի մ'ալ ունէր. հայերէն
Աստուածաշունչն առաջին անգամ այդ
քաղաքը տպագրուած է Երևանցի
Ռսկան վարդապետին ձեռքով։ Ո՛ւր
են հիմա այդտեղի հայեր, ի՞նչ եղան։
Հայ եկեղեցին առանց հայ ժողովրդ-
դի մնալով, օտարներէն յափշտակ-
ւելու և ձրիապէս անոնց սեփական
նութիւն դառնալու վտանգին մէջ էր

ինկած երբ Գէորգ Գ. կաթողիկոս
վաճառեց զայն Յիսուսեան կրօնա-
ւորներին որոնք իրենց համար վանքի
վերածեցին։ Այդ եկեղեցիի վէմ քա-
րըն իբրև հնութիւն մը բերուած ի
տես դրուած է այժմ Մարսէյլի Բրա-
տօի հանրային պարտէզին (Parc Bo-
rély) մէջտեղը գտնուող « Հնութիւննե-
րի թանգարան »ը։ Ահա արտասահ-
մանեան հարուստ հայ գաղութի մը
եկեղեցիի վէմ քարը (1) այժմ Հնու-
թիւնների թանգարանի մը մէջ։

Նոյն իսկ Մարսէյլի մէջ եղած է
երբեմն հարուստ հայ գաղութ մը՝

(1) Այդ քարի վրայ փորագրուած է հե-
տևեալը. « Ի թուին ՌձԺԲ մայիսի ԻԳ
'ի քաղաքն յԱմսդէրտամ արգեամբք Չա-
բարի որդւոյ Դաւթի ձիւղայեցւոյ։ Եւ են-
թագրութեամբ Կարապետի բանի սպասա-
ւորի կազմեցաւ վէմն Օլլանդիու Սբ. Կա-
րապետին։ »

Հայերէն տպագրական պատմութեան ծանօթ երոզները գիտեն որ 17րդ դարին մէջ կար այստեղ նոյն իսկ հայերէն տպարան մը ուրկէ մի քանի հայերէն գիրքեր լոյս տեսած են. բայց այն ժամանակի Մարսէլլաքնակ հայ վաճառականները թէև դրամով հարուստ բայց ազգային զգացումներով ազքատ լինելով չկրցան քաջաչեւել, ինչպէս որ պէտք էր, այդ տպարանի հրատարակութիւնները. այնպէս որ այդ ազգօգուտ գործին ձեռնարկող Ռսկան եպիսկոպոս վերջին ծայր խեղճութեան մէջ ինկաւ Մարսէլլի մէջ. մէկ կողմէ էջմիածինը կուշացնէր օգնութիւն հասցնելն անոր, թէ՛ իր դրամական ներդրութեան և տեղի հեռաւորութեան պատճառով և թէ՛ յոյս տածելով որ Եւրոպայի հայ վաճառականներն ի հարկէ կօգնեն անոր. միւս կողմէ ալ Եւրոպայի հայ վաճառա-

կանները կը յուսային թէ անշուշտ Ազգը կօգնէ Ռսկան եպիսկոպոսի ձեռնարկած գործին. ի վերջոյ գործն այնտեղ հասաւ որ այդ տպարան փակուեցաւ և Ռսկան եպիսկոպոս իր կրած բարոյական ծանր տառապանքներէն զատ՝ ծանր պարտքերի տակ ալ ընկճուելով բնտարկուեցաւ դատարանի վճռով և վշտահար վախճանեցաւ, որի թողած հայերէն տառերը և տպարանական գոյքերէն մաս մը, եթէ չենք սխալիր, Սեբաստացի Մխիթար վարդապետը գնեց յետոյ: Այդ տպարանէն ելած հայերէն գիրքերէն մի քանին (ժամագիրք և այլն) մինչև այժմ տակաւին կը գտնուին Մարսէլլի Քաղաքային Գրատան (Bibliothèque de la Ville) մէջ ուր ուզողը կրնայ երթալ հարցնել ու տեսնել: Բայց ո՛ւր մնաց այն ժամանակի դաղթական հայերի սերունդը,

ինչ եղան... : (Հիմակուան Մարտէլլի
 Հայ գաղութն անոնց սերունդը չէ՛,
 այլ Թիւրքիաէն կամ Ռուսիաէն հոս
 եկած Հայեր են, ամէնէն հիները հա-
 զիւ 30-35 տարի առաջ եկած) : Մար-
 տէլլի մէջ տակաւին մինչև այժմ կայ
 Armény անուն փողոց մը, հին ուղ-
 դադրութեան համեմատ Կով գրուած,
 ինչպէս փորագրուած է նաև Կիլի-
 կիաի մեր վերջին թագաւոր Լեոնի
 շիրմին վրայ փարիզի մէջ : Տեղական
 պատմութիւն մը կըսէ թէ d'Armény
 կոչուած նշանաւոր հին գերդաստանի
 մը պատկանող Մարտէլլցի զօրավարի
 մը անունով այդպէս կոչուած է այս
 փողոց ուր կը բնակի ցայժմ 15րդ
 զօրաբանակի ընդհանուր հրամանա-
 տարը և այս նահանգի կառավարչա-
 կան պալատն ալ այդ փողոցի վրայ կը
 նայի : Բայց այդ հին գերդաստանի
 անունի կազմութեան կերպն իսկ, d'

նախդիրով կազմուած, միթէ՞ ենթադ-
 րել չտար որ Հայաստանէն գաղթած
 լինի : Վաճառականական Սակարանի
 (Bourse du Commerce) ետևի հին փո-
 ղոցներին մէջ մինչև այժմ կայ հին
 ուղղադրութեամբ, Կով գրուած, Fon-
 taine d'Armény անուն փողոց մը (1),
 ուր աղբիւր մը կայ որ աւելի նմա-
 նութիւն ունի Հայաստանի աղբիւրնե-
 րին քան թէ Մարտէլլի միւս աղ-
 բիւրներին : Այս անուններ, վերոյի-
 շեալ գիրքերին պէս, մնացեր են տա-
 կաւին իբրև հետքեր Մարտէլլաբնակ
 հարուստ Հայ գաղութի մը բայց կը
 կրկնենք թէ ո՛ւր են այժմ այդ գա-
 ղութի Հայ սերունդները... :

25 տարի առաջ երբ սկսայ Արմէ-

(1) Ներկայ 1913 թուականին քանդուե-
 ցաւ այս հին փողոց իր յարակից փողոցնե-
 րով մէկտեղ, ընդարձակ պողոտայով մը
 աւելի շքեղ փողոցներ շինուելու համար :

նիսան հրատարակել այստեղ, ինչպէս
 և յետոյ ալ զանազան ժամանակներ,
 թերթը տարածելու համար հայերէն
 անուններ փնտռելով անոնց հասցէնե-
 րին զրկած եմ, նամակով կամ լրա-
 գրին մէջ յայտարարելով թէ ի՞նչ նը-
 պատակով զրկած եմ իրենց և խընդ-
 րելով որ իմացունեն մեզ եթէ կողմն
 բաժնորդագրուիլ կամ ոչ, որ մենք
 ալ անոր համեմատ շարունակենք կամ
 դադրեցունենք իրենց զրկելը: Պա-
 տահած ենք բուն հայկական անուն-
 ների, ինչպէս վէմեան, Տայեան և
 այլն որոնք հայ կարծելով սխալած
 լինելնիս իմացած ենք յետոյ: Ատոնց-
 մէջ ոմանք մեզ յայտնեցին թէ իրենց
 տան մէջ աւանդութիւն մը կայ թէ
 իրենց պապեր հեռաւոր երկրէ մը
 գաղթած եկած են Մարսէյը բայց
 իրենք չեն գիտեր հիմա թէ ո՞ր երկ-
 րէն հաւանական է որ Հայաստանէն

եկած լինին: Ատոնցմէ մին ալ գի-
 տէր հայ սերնդէ լինելը, իր հայրէն
 լսած լինելով, բայց հայերէն չէր գի-
 տեր:

Ա. Լ չենք խօսիր մենք իտալիաի
 հայ գաղութին վրայ, որի մասին լու-
 տահոգի Հ. Դ. Ալիշանի գրածները
 կրնան կարգալ հետաքրքիրները: Եւ
 այլն և այլն. որոնց մէջ ուշագրաւ և
 խրատական է մասնաւորապէս Հընդ-
 կաստանի Հայ գաղութի պատմու-
 թիւնը, իր անցեալ փառաւոր վիճա-
 կով և հայանպատ դործերով ու իր
 ներկայ կացութիւնով:

Գանք հիմա Սմերիկաին:

Գ

Սմերիկան հսկայադործ խառնա-
 րան մ'է ուր շատ մը կողմերէ գնա-
 ցած այլազան ազգութիւնների հատ-

ւածներ խառնուելով տեղացիներին հետ կը ձուլուին հետզհետէ և իրենք ալ կը կազմեն Ամերիկեան ազգութիւնը:

Յայտնի է որ Ամերիկաի Միացեալ-Նահանգների ժողովուրդն Ամերիկաի բնիկ կիսավայրենի հին ցեղերի սերունդը չէ արդէն, այլ Անգլիաէն, Ֆրանսաէն, Իտալիաէն, Գերմանիաէն, Իրլանտաէն և այլն երկիրներէ հոն գաղթածներն են որ կը կազմեն այսօրուան Ամերիկեան ազգութիւնը և հետզհետէ հոն գաղթողներն են որ 80 միլիոնի հասուցած են այժմ այդ Ամերիկացիների թիւը Միացեալ-Նահանգներին մէջ: Այնպէս որ Ամերիկեան ազգութիւն ըսուածը ո՛չ առանձին ցեղ մ'է, ո՛չ իրեն յատուկ ազգային լեզու մ'ունի (անգլիներէն է իր լեզուն), ո՛չ ալ ազգային եկեղեցի ունի (բողոքական ամէն եկեղեցիներ

ինչպէս և քրիստոնէական միւս եկեղեցիները և մովսիսականութիւնը թողատրուած են անխորապէս), պաշտօնական միակ եկեղեցի չկայ: Մինչև անգամ ազգային առանձին անուն մ'ալ տակաւին ունեցած չէ 80 միլիոնի հասած այդ ժողովուրդը: Ամերիկաի մէջ, որ ահագին ընդարձակ երկիր մ'է, տէրութիւններ կազմած զանազան ազգեր կան, ինչպէս Պրազիլացի, Շիլիցի, Մէքսիքացի և այլն, որոնք ամենքն ալ Ամերիկացի են միևնոյն ժամանակ, իրենց ազգային մասնաւոր անուն մ'ունենալով մէկտեղ. ի հարկին ատանցմէ զատելու, որոշելու համար մեր Հայերի մեծ բազմութեամբ գաղթած երկիրը և այդ երկրի ազգութիւնը, պէտք է երկար բացատրական անուն մը տալով ըսել « Ամերիկաի Միացեալ Նահանգների երկրացի (citizen) »: Ահա

80 միլիոնէ բաղկացած և զանազան ազգերի գաղթականութիւններէն կազմուած ժողովուրդ մը, որ ո՛չ առանձին ցեղ մը կը ներկայացունէ, ո՛չ իրեն սեփական ազգային լեզու մ'ունի և ոչ իսկ տակաւին իրեն միայն յատուկ ազգային անուն մ'ունի մէկ բառով շինուած, այլ սակայն իր կըրթութեամբ, իր օրէնքների ուժով և իր բնակիչների խելքով ու ձեռներէցութեամբ այնչափ յառաջդիմած ու զօրեղացած է որ իր ծոցը գիմող ամէն ազգութիւններն ալ, մեծ ու սղօտիկ, կը կլէ կը մարտէ և իրեն հետ նոյնացնելով կը գիրանայ կը ստուարանայ :

Արդ, այդտեղ ուր Անգլիացին, Ֆրանսացին, Գերմանացին և այլն չեն գիմանար, կը ձուլուին, խեղճուկ Հայ գաղութն ի՞նչպէս պիտի կրնայ շատ երկար ատեն պահպանել իր առանձին

ազգութիւն: Շո՛տ հսկայական ջանքեր պէտք են ատոր համար....

Մեր այս խօսքեր կը վերաբերին դիտարոյապէս ապագայ սերունդներին. հայրենիքէն Սմերիկա գաղթածներն անշուշտ կրնան համեմատապէս աւելի գիւրութեամբ պահպանել իրենց Հայութիւնը. բայց ատոնց զաւակների ու թոռների Հայ մնալուն վրայ ո՞վ կրնայ վտահիլ: Ինչպէս որ թխտող հաւին տակ բաղի կամ սագի ձուեր դրուելով, երբ ատոնք լոյս աշխարհ տեսնեն և սկսին իրենց մօր ետեէն քաշել, ջրի մօտիկ տեղէ մը անցած ժամանակ այդ ձագուկներ բնազդէն մղուած կերթան ջուրը մըտնել, իսկ թխամայրը լճափը կեցած կը յուզուի, թե երբ կը բախէ կը գըրգըրայ բայց չկրնար արգելել զանոնք ջուրը մտնելէ, այսպէս ալ Հայաստանէն Սմերիկա գնացած հայրիկը կամ

մայրիկը թէև կը յուզուի այնտեղ
 ծնած իր թոռնիկի համար որ ան ալ
 իր գիտցած ճանապարհէն քալէ, բայց
 չլընար արգելել անոր ընթացքը գէ-
 պի ուր որ կը մղէ բնազդը և իր ծը-
 նընդամասրի քաղաքական հոսանքը:

Այդ բնազդական հոսանքին առջև
 Հայութիւնն ալ պահպանելու համար
 ինչ միջոցներով պիտի կրնայ մի քանի
 կէտերի վրայ թուճեր կանգնել Հայ
 ազգն Ամերիկայի պէս երկրի մը մէջ
 ուր ազատութիւնը համբարուի (sirène)
 մը նման քաղցրաձայն կերգէ և կը
 հրապուրէ իրեն մօտեցողները....:

Թէև Հրեայներն ալ մեզի նման
 գաղթող ժողովուրդ մ'են, բայց անոնց
 իրենց ազգութիւնը գաղթականու-
 թեան մէջ մերինէն աւելի հաստատ
 պահելու միջոց մ'եղած է իրենց կը-
 բօնքի ինքնուրոյնութիւնը և մեծ
 տարբերութիւնը գաղթավայրի բնիկ-

ների կրօնքէն: Մենք ալ այդ մեծ
 տարբերութեան հետեանքովն է որ
 կրցեր ենք պահպանել Հայութիւնը
 մահմէտականութեան մէջ, թէև շատ
 հալածանքների ենթարկուած: Բայց
 քրիստոնեայ երկիրներին մէջ տեղացի-
 ներին հետ խառնուելով ձուլուին աւե-
 լի կը հեշտանայ Հայերին համար:

Չենք ըսեր թէ բոլորովին անհնար
 է պահպանել Հայութիւնն Ամերիկայի
 մէջ շատ երկար ատեն. բայց Ամերի-
 կայի մէջ ծնած Յրգ սերունդէն՝ այ-
 սինքն թոռան զաւակէն ալ աւելի եր-
 կար ատեն Հայութիւնը պահպանել
 Ամերիկա գաղթած Հայ ընտանիքի մը
 մէջ՝ չափազանց դժուար կը թուի
 մեզ:

Գիտենք որ Ամերիկայի նախկին
 Առաջնորդ Գեր. Յովսէփ Արքեպ. Սա-
 բաճեան զանազան ծրագիրներ կերկ-
 նէր կարելի եղածին չափ երկար

ատեն անկորուստ պահպանելու համար Հայութիւնն ու Հայաստանեայց եկեղեցին Ամերիկայի մէջ ուր կարենան Հայեր միեւնոյն ժամանակ օգտուել այդ երկրի մտաւորական և տնտեսական հիանալի յառաջդիմութիւններէն: Նոյն իսկ այժմ որ առաջնորդական պաշտօնէն հրաժարած կը մնայ Ֆրէզնօ (1), անտարբեր չկենար այնտեղ, այլ հայ մանուկները դպրոցի մը մէջ ժողված՝ հայերէն լեզուի և հայ եկեղեցական ուսման դասեր կուտայ անոնց ինք անձամբ և իրեն օգնական աչ ունենալով: Գիտենք նաև որ հայկական զանազան ընկերութիւններ, ինչպէս և յեղափոխական կուսակցութիւններն, իւրաքանչիւրն իր տեսա-

(1) Ինչպէս յայտնի է, Գեր. Յովսէփ Արքեպ. Սարաձեան պաշտօնով Վան տեղափոխուած է այս տողերի հրատարակումէն յետոյ, 1911էն ի վեր:

կէտով, կաշխատին հայ ազգային զգացման չթմրելուն Ամերիկայի մէջ:

Այդ բոլոր գովելի ջանքերը մեծապէս գնահատելով և ատոնց համար ուրախանալով մէկտեղ, մենք կատիպւինք ըսել դարձեալ թէ Ամերիկայի հայ գաղութի ապագայն կորստաբեր պիտի լինի Հայ ազգայնութեան տեսակէտով: Ներկային մէջ կարելի է տեսնել ապագայն ալ եթէ չլինանք և կամ կարճատես աչքերով չդիտենք:

Գաղթականութիւնն անարիւն կոտորած մ'է Հայ ազգին համար: Իբրև է թէ գետինը թափուած կարմիր արիւն չտեսնուիր որ աչքի զարնէ և սոսկում ազդէ. բայց երբ անոր պատճառած վնասներն ու կորուստներն հաշուի առնուին մանրամասնօրէն, պիտի տեսնուի որ ամենասոսկալի տեսակէն կոտորած մ'է այն:

ԱՐՄԷՆԻԱ

Արագիր ազգային բաղարական եւ այլն

Սմբողջ Եւրոպայի մէջ (կ. Պօլսէ-
զուրս) հայերէն լեզուով հրատարակ-
ուող միակ լրագիրն է Արմենիան:
Խմբագիր-անօրէնն է Մ. Փոլսթու-
գալեան որ 1885 օգոստոսին հիմնե-
լով այս լրագիրը կը շարունակէ ցարդ:

Տարեկան բաժնորդագինն է Թիւր-
քիաի և Պարսկաստանի համար 10
ֆրանգ. իսկ ուրիշ տեղերի համար 20
ֆրանգ: Կարելի է նաև բաժնորդա-
գրուել քանի ամսի համար որ ուզ-
ուի, Թիւրքիաի և Պարսկաստանի
համար ամսական 1 ֆրանգ, իսկ ու-
րիշ տեղերի համար ամսական 2 ֆր-
հաշուելով:

Հասցէ՝ **M. Portoukalian**

Directeur du journal « Armenia »



Ս. 8 - 1

97 - 3

20

U.S.

Truett

3483

24547

24548

24549

24550

2013

